

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թիֆլիսի առևտրական գազեր:

Հրատարակում է շաբաթը մէկ անգամ կէս թերթի, կիրակի օրերով: 10 տետրայ զինքը Մարտից մինչև Յունիսը 1 թաղաքում 2 ման. 50 կոպ., դուրսը 3 ման. թ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ
(Ա.Ռ.Ա.Ջ.Ի.Ն ՏԱՐԻ)

Գաղթի մասին տարազգի լի կարելի է խմբագրողի մօտ:
Գաղթի մասին հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գնքերի մասին կարելի է խմբաւոր խմբագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Տէրութեան կարգադրութիւններ: Կովկասեան երկրի բերդերի մասին: Շաաւայոյնների փոխտնտեսներ: Տարեկան և ուրիշ յայտարարութիւններ: Բանկի մասին: Աղջկանց խնամատաններ և գիմնասիւններ: Չանապան տեղեկութիւններ: Առևտրական տեղեկութիւններ:

ԽՐԱԳՐԱՏԱՆԻՅ:

«Առճառականի» խմբագրութեանը յայտնում է, որ էս տարի ուլիսի 1-ից սկսած, բացի 10 մնով ստորագրվիլը, ընդունում նմանապէս և 6 ամսով ստորագրութիւն մինչև դեկտեմբերի վերջը: Էդ վեց ամսի համար գինը նշանակվում է Թիֆլիսում 1 մ. 50 կ. յաւի քաղաքից դուրսը 2 մ.

Դեռ էլի շարունակվում է «Առճառականի» համար ստորագրութիւնը առաջին Աճ-ից էս գաղթի ճակատումը յայտնած գներով:

ՏԵՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Կովկասեան երկրի բերդերի մասին: Էս տարի ապրիլի 23-ին, XIV հատոր օրէնքի 28—94 յօդաւածներին հիման վրայ բարձրագոյն հաստատուեցաւ Կովկասեան երկրի համար մէկ առանձին ընկերութիւն, բերդերի հողաբարձութիւնը կրելու: Էդ հաստատութիւնը ստանալուց յետոյ Նոբին Բարձրութիւն Կովկասեան ֆոխարքայի

հրամանով բացվեցաւ Թիֆլիսում «Գաւառական կոմիտետ բերդերի համար հողաբարձութիւն անկուս»: Էդ կոմիտետումը նշանակվեցան 5 վիցեարեղիւհեաններ և մինչև 30 զիրեկտորներ: Կոմիտետը արդէն սկսել է իր գործունէութիւնը և յայտնում է հասարակութեան, որ բերդերի լաւացնելու և նրանց մէջ բռնաւճանների համար հողաբարձութեանը է կոմիտետումը ընծայաւորութիւն թէ փողով և թէ կաշուածքով ինչպէս կտակադրի զօրութեամբ, նմանապէս և միւս կանոնաւոր վկայաթղթերով: Կոմիտետը գտնվում է Թիֆլիսի դաւառական կառավարութեանում:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԳՈՓՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Յունիսի 14-ին ունեւոր օֆիցեր ՇԱԴԻՆՅԱՆՅԱՆ և իւնիսի ՄԻՐԶՈՅՆԱՆՅԱՆՅԱՆ ստացան պարագրիչիկի ատոման:

Ապրիլի 14-ին Եկատարինայի նահանգական կառավարութեան ատենադպիր, տնտեսական սովետական ԱՎԵՐԵՆՅԱՆ տեղափոխվեցաւ Թիֆլիսի դաւառական կառավարութեանում սեղանապետի պաշտօնով: Յունիսի 3-ին Թիֆլիսի դաւառական կառավարութեանում անշաշտօն ծառայող, զեյտիտեանի ստաւդեան Նիկողայոս ԲԵԺԱՆՅԱՆ տեղափոխվեցաւ Թիֆլիսի առևտրական դատարանում նմանապէս անշաշտօն ծառայողի կոչումով:

ՏԱՐԱԿԵՐ ԵՒ ՌԵՐԵՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Վրաստանի և իմէրէթի հայոց վիճակալին Կոնստանտնուպոլիսում էս տարի սեպտեմբերի 19-ին նշանակված է Թիֆլիսում, Օրթաճալայի մօտ, Կուր դետի ամին գտնված, Ստեփաննոս Գալփախեանցի Սուրբ Էջմիածնին և Թիֆլիսի Նիսիսեան հողերը զբաղ-

ւոյին ընծայած այդու իշարով տալու տորգը: Ովոր կամենում է մանրամասը տեղեկութիւններ ստանալ էս տորգի մասին կարող է դառնալ յիշեալ Կոնստանտնուպոլիսում 8 սահմանից մինչև կէսօրը, բացի կիրակի և հանդիսաւոր օրերից:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Օգոստոսի 20—1866.

Առևտուրը, էնտրարի և բանկերի հարկաւորութիւն ունի: Ամեն բանկ ունի իր զրամագլուխը (ֆոնդը) և առանց էդ գումարի ոչ մէկ բանի չկայ: Բանկը զրաւ է վերաւնում փողի հարկաւորութիւն ունեցող վաճառականներից վեկսիւններ ու տեղը փող է ստիլիս որոշած չափով և ժամանակով: Երբ որ բանկումը շատ է նաղդ փողը և քիչ են զրաւ վերաւում վեկսիւնները կնշանակէ բանկը լաւ դրութեան մէջն է, կուարանալու վրտանդ չկայ, թէն մի և նոյն ժամանակը բանկի էդպիսի հանդարտութիւնը և անշարժութիւնը առևտուրի չլինելու կամ քնստուութեան նշան է:

Երբ որ առևտուրի թմրութիւնը անց է կենում և շարժութիւն է ընկնում, ի հարկ է էս ժամանակը հարկաւոր է վաճառականներին բանկի օգնութիւնը, բայց բանկի էլ տեսնելով, որ իր օգնութեան կարօտ է լաճների թիւը շատ է, իսկոյն սկսում է քրջացնել էնտրարը, կամ լաւ եւ ասել մեծ չափ է վեւ առնում: Անվարելի է, որ էդպէս չլինի, որովհետեւ բանկը վեկսիւններ զրաւ վերաւնում և տեղը նաղդ փող տալով միշտ պէտք է աշխատէ, որ իր նաղդ փողը չպակտի և հասնի և վերջապէս էնքան աղաւթիւթիւն ունենայ նաղդ փողով, ինչ գումարի որ ինքը տամակներ է դուրս տվել:

Նվթէ էդ չէլաւ, էն ժամանակը բանկը կուտ-
րանում է: Ետեւորարի քանակաւ և իր սն-
դուկի մէջ որոշած գումարը պահելու համար,
բանկը հարկադրված է լինում կամ շատ պա-
կասով դրաւ վեր առնել վաճառականների
հերկայացրած վեկսիւնները, կամ շատ կարճ
ժամանակով տալ պարտք և մէկ խօսքով էլ
չփութել վեկսիւնները և դանազան թղթա-
ղբամները ոսկու և արծաթի վրայ: Եղպէս
անա բանկի կասսայի գրովներէն է կախ-
ված էտեւորարի շատութիւնը կամ քչութիւ-
նը: Նրբ որ բանկի մէջ շատանում է զրաւ
վեր առած վեկսիւններ թիւը, իսկ քանում է
նազդ փողը, էն ժամանակն, ասացինք, բան-
կը քչացում է իր և վաճառականների մի-
մեանց մէջ ունեցած էտեւորարը և հետևանքը
լինում է բնդհանուր առևտրական քեսա-
տութիւն և կրկնութիւն:

Անդրկայումը, Ֆրանսիայումը և Ամերի-
կայումը, եղպիսի կրկնութիւնը սկսեցին կըր-
կնվիլ ոչ միայն տարեցտարի, այլ և ամսե
ամիս և մէկ սովորական բան դարձան: Արի-
ղիսի սկսվելուց առաջ հասարակութենի մէջ
նշմարվում է մէկ անբնական գործունէու-
թիւն, ամենքը իրանց կարողութիւնից դուրս
մեծ մեծ գործերի են յղվում, ամենքը կա-
մենում են կարճ միջոցումը և կասեա թէ
յանկարծ հարստանալ: Եւ բոլորը ի հարկէ
նախ և առաջ աղղեցութիւն ունի սուռտուրի
և վաճառականութենի վրայ: Ֆարրիկանե-
րումը սկսում են գիշեր ցերեկ բանիլ, աս-
քանք պատրաստել, դուքանները լքցվում են
սպորանքներով և օրէցօր էլ շատանում են
դուքանները: Բայց յանկարծ ամբողջ երկիրը
լքցվում է սպորանքներով, ճանապարհները
բնդվում են հակներով, առևտուրի ընթացքը
դադարում է, էլ շարժողութիւն չկայ, սկսած
գործերն էլ չեն յաջողում, փողը անհետա-
նում է. շատ ապրանքներ ամենաչնչին դնով
են ծախվում, միմիայն, ճանապարհի ծախսի
դուրս դալու մտքով, մէկ քանի սպորանքներ
շատ սաստիկ թանկանում են, վաճառական-
ների ղէպի միմեանց ունեցած էտեւորարը
անհետանում է: Եւ էղպէս անա սկսվում է
կրկնվիլ:

Պէտք է ասել, որ կրկնութիւնը ամենից լաւ
գուշակողները բանկերն են: Եթէ լաւ քն-
նենք Ֆրանսիայի, Անդրկայի և Ամերիկայի
բանկերի հաշիւները, կտեսնենք որ բոլոր
առևտրական կրկնութիւնները են պատճառով են
ծագել, որ բանկը չափիցը դուրս շատ վեկ-
սիւններ է վեր առել դրաւ և իր նազդ փողը
քչացրել է: Յայտնի է որ 1839 թվին մի և
նոյն ժամանակը կրկնութիւնը էլան Անդրիա-

յումը, Ֆրանսիայում և Հիւսիսային Ամերի-
կայումը: Էն ժամանակից դէսը էդ տեւու-
թիւնները մէջը էդ բանը կրկնվեցաւ երեք
անգամ՝ 1847, 1857 և էս 1866 թվերին,
սրանից մէկ երկու ամիս առաջ: Ամեն ան-
գամ էլ բանկի հաշիւներից երեւում է, որ դը-
րաւ վեր առած վեկսիւններ և ուրիշ թղթա-
ղբամների գումարը շատ շատ է, քան թէ
բանկի ունեցած նազդ փողի գումարը:

Վեր առնենք Ֆրանսիայի բանկի 1847
թվից մինչև 1859 թիւ միջոցը: 1847 թվին
կրկնվիւ էր և էդ տարի դրաւ վեր առած վեկ-
սիւնների գումարը հասաւ մինչև 1,327 միլիոն
ֆրանկին, իսկ նրա նազդ փողը իջաւ
մինչև 57 միլիոն ֆրանկ: 1849 թվին վեկ-
սիւններ առնվեցաւ միմիայն 256 միլիոն ֆը-
րանկի և բանկի նազդ փողի գումարը հա-
սաւ 626 միլիոնին: 1857 թվին նորից կը-
րկնվիւ էլաւ: Վեկսիւնների գումարը հասաւ
2,085 միլիոն ֆրանկին և բանկի դրամա-
ղուխը 72 միլիոնին: 1859 թվին վեկսիւ-
նների գումարը իջաւ մինչև 1,144 միլիոն,
բայց դրամաղուխը հասաւ 287 միլիո-
նին: Էս բոլորիցն երեւում է, որ կրկնութիւնների
պատճառն էն է, որ բանկը ամեն անգամ
շատ մեծ գումարի վեկսիւններ է վեր առել
դրաւ իր նազդ փողը, իր ապահովութիւնը
բոլորը դուրս է տվել, յետոյ ինքն էլ չէ կա-
րողացել բաւականութիւն տալ առևտուրի
պահանջողութիւններին և կամայ ակամայ
ստիպված է էլել պակասացնել իր էտեւորարը:

Մի և նոյն բանը տեսնում ենք Անդրիայի
բանկումը: Օրինակ, 1847 թվին կրկնվիւ էր:
Վեկսիւնների գումարը 38 միլիոն ֆունտ
ստերլինգ էր, դրամաղուխը—8 միլիոն ֆունտ
ստերլինգ: 1849 թվին վեկսիւնների գումարը
4 միլիոն ֆունտ ստերլինգ, դրամաղուխը—
22 միլիոն ֆունտ ստերլինգ: 1857 թվին էլի
կրկնվիւ էր: Վեկսիւնների գումարը հասնում
է 49 միլիոն ֆունտ ստերլինգին, իսկ դրա-
մաղուխը իջնում է մինչև 6 միլիոն ֆունտ
ստերլինգ:

Էս օրինակները բաւական են էն բանը
հաստատելու համար, որ ամեն փողի (ոսկու
և արծաթի) դրամաղուխի վրայ հիմնված բանկ
չի կարող միշտ բաւականութիւն տալ առև-
տուրին և վաճառականութենի պահանջողու-
թիւններին: Բայ ի էդ, ոչքան որ վաճառա-
կանութենի պահանջողութիւնները սաստիկ
են, էնքան աւելի քիչ է ուղում օգնել բան-
կը, էնքան աւելի ժլատանում է դա և դըժ-
ուար է դրան մօտենալ: Իհարկէ էղտեղ
բանկը ամենեկին մեղաւոր չէ, որովհետեւ դրա
նպատակը չէ թէ էղպիսով առևտուրին վը-

նաս տալն է, այլ միմիայն իր աղատվելու
ցանկութիւնն է—որի համար մեղադրել չի
կարելի:

Ա. Ե.

ԱՂՋԿԱՆՅ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ԵՒ ԳԻՄ- ՆԱԶԻԱՆԵՐԸ:

Էս անգամով կամենալով խօսել մասնա-
ւորապէս աղջկանց վրայ, ուշք են դարձ-
նում նրանց՝ դաստիարակութենի և ուսում
տալու միջոցներին, որովհետեւ դաստիարա-
կութենի և ուսում տալուցը կախված է նը-
րանց մտքի և սրտի որպիսութիւնը և աշ-
խարհումը իրանց ամուսնու, զաւակների և
տանտուտեղի համար արժանաւոր և յարմար
կին, ծնող և տանտիկին լինելու:

Աղջկանց դաստիարակելու և ուսում տա-
լու համար Ռուսաստանումը երկու կերպ ու-
սումնարաններ կան՝ ինստիտուտներ և դիմ-
նաղիաներ: Մենք էս ուսումնարանների վը-
րայ մանաւանդ ուզում ենք խօսել էն պատ-
ճառով, որ մեր կովկասումն էլ կան էդ ին-
ստիտուտներից և էս վերջին ժամանակնե-
րումն սկսվեցան բացվիլ և գիմնաղիաներ:

Աղջկանց ինստիտուտ ասելով մենք իմա-
նում ենք էն ուսումնարանը, որը որ ժողո-
վում է միայն բարձր կարգի և առհասարակ
արտօնութիւններ ունեցող ծնողներից, այս ին-
քն իշխանների, ազնականների և աստի-
ճանաւորների որդիներանցը, ուսում է տա-
լիս 7 և աւելի տարի ժամանակ, բոլորովին
հեռու պահելով նրանց իրանց տանտուտեղից,
ծնողներից և աշխարհից:

Բայց աղջկանց գիմնաղիաներումը սովո-
րելիս աղջիկը մի և նոյն ժամանակը սովո-
րում է, ուսում է առնում և յետոյ մնացած
ժամանակները իր տանն է, իր ծնողների և
բարեկամների հետ և ուրեմն աշխարհի մէջը:

Թէ որ ուսումնարանը, ինստիտուտը, թէ
գիմնաղիան աւելի յարմար են աղջկանցն
իրանց նշանակութենի համար պատրաստե-
լու, պարզ իմացվում են մեր վերելի կարճ
ասածներից: Տան ու տեղի, իր ամուսնու և
զաւակների համար պիտանի տանտիկին, կին
և ծնող լինելու համար ի հարկէ նրան
հարկաւոր է տանտուտեղի մէջ, ամուսինների
և ծնողների և զաւակների հետ կենալը:
Բայց էդ բոլորից հեռանալով, աղջիկը ու-
րեմն չի կարող բոլորովին յարմարացնել ի-
րան էդ նշանակութիւններին:

Ինստիտուտների հիմը դրվեցաւ Ռուսաս-
տանումը 1764 թվին Նիկատարինա մեծի օրե-
րով, որը որ օրինակ առաւ էդ ուսումնա-

բաներն չլինելու Զրախարայի ինստիտուտները:

Առաջին պայմանն էր ինստիտուտների մէջ սովորողների համար էն էր որ ընդունվում էին էստոնացի միայն բարձր կարգի մարդկանց զաւակները, բոլորովին ուսումնի ճանապարհը կապելով միւս կարգի և խեղճ ծրնողների որդիներն է համար: Բայց որովհետեւ վերջին ժամանակներում աղջկանց ուսումն աղբուր օգուտը և ստորին կարգի մարդիկը հասկացան և որովհետեւ դրանցը բաւականութիւն չէին տալիս ինստիտուտները, էդուրից ծագեցաւ մէկ ուրիշ կերպ աղջկանց ուսումնարանների բաց անելու հարկաւորութիւնը, որտեղ ընդունվում էին անաւան զանազաններ ամեն կարգի մարդկանց աղջիկները սովորելու: Եւ էնպէս էլ էլաւ: Բոլորաւստանում 1858 թւից մինչև 1866 թւի յունվարի 1-ը 43 աղջկանց դիմագրիւններ բացվեցան, այս ինքն էնպիսի ուսումնարաններ, որոնց դռները բաց են ամեն կարգի մարդկանց աղջիկները ընդունելու:

Երկրորդ պայմանն էր ինստիտուտների մէջ սովորողների համար, ինչպէս վերը ասացինք էն է, որ դրանք փակած են պահում աղջիկներն ուսումնարանի պատերումը, բոլորովին հեռու պահելով նրանց աշխարհիցը 6, 7 տարով: Ամենին յայտնի է, թէ ինչ վատ հետեանքներ է ունենում աղջկանց համար իրանց տան ու տեղից, ծնողներից և աշխարհից էդպէս երկար հեռու և բաժան մնալը: Աղջիկը ինստիտուտումը ուսումնաւարտելուց յետոյ յետ է դառնում իրանց տունը, բայց էդ իրանց տունը էլ իր անը չէ երևում, որովհետեւ նրա երկար բաժան մընալը, ինչոր իրանն էր նրա համար օտարացել է և խորթացել: Խորթացել է նրա համար տունն էլ, տեղն էլ, ծնողներն էլ և բարեկամներն էլ: Եդտեղից ծագում են անդադար անբաւականութիւններ ծնողների և իրանց մէջ և նրանց ամուսնու մէջ, երբ որ նրանք մարդու են դնում: Ինչի է էդպէս սաստիկ խորթանում աղջիկը իր տան ու տեղից: Ենգուր որ բաց ի էն, որ ինստիտուտը նրան 7, 8 տարով հեռու է պահում աշխարհից, ծնողներից և բարեկամներից, տալիս է նրան մէկ էնպիսի ուսում, որ կեանքի համար շատ քիչ է պէտք գալիս: Աղջկան հարկաւոր է մտաւորապէս էնքան բացվիլ, որ իր ամուսնու հետ կարողանայ աւանց անբաւականութիւնների ապրել, որովհետեւ անբաւականութիւնների զլխաւոր պատճառը մէկամէկուն չհասկանալուցն է: Աղջկան հարկաւոր է իր որդեկանցը կրթել, նրանցը

պահել առողջ մարմնով և հոգով և կարծիք չկայ, որ էդ բաների դիտեալու համար նրան հարկաւոր է սովորել իր որդու մարմնակազմութիւնը, դիդիկեայի կանոնները և դատարարակութիւնի սկզբունքները: Աղջկան հարկաւոր է դիտեալ իր տան ու տեղի կառավարելը և տանտիրութիւնի համար հարկաւոր բաների դիտեալը: Բայց ինստիտուտները հասցնում են աղջկանցն էն նպատակներին, տալիս են էդ դիտութիւնները: Պատասխան են տալիս—չատքիչ:

Այդա ինչ են տալիս աղջկանցը ինստիտուտները: Ինստիտուտները սովորցնում են շատ բան և մի և նոյն ժամանակը անպտուղ և կեանքի համար անօգուտ: Դասերից ադատ ժամանակները աղջիկները մնում են բոլորովին պարապ և ամենին յայտնի է պարապութիւնից ամեն վատ և վնասակար բաների առաջ գալը: Բաց ի էն, որ դրանք փակված սենեակներում իրանց առողջութիւնը փչացնում են զանազան անբնական արարմունքներով, իրանց միտքն էլ խանգարում են բոլորովին զանազան բռնանքներ կարգաւով: Աղջիկը կենալով ինստիտուտի մէջ մի և նոյն ժամանակը երեսկացութիւնով իր ստեղծած աշխարհի մէջն է ապրում, էնպիսի աշխարհի մէջ, որն որ մեր տեսած բնական աշխարհի հետ բոլորովին նմանութիւն չունի: Եւ էդուրից է, որ ինստիտուտներից դուրս եկող աղջիկները իրանց հետը դուրս են բերում և իրանց տուն են տանում շատ օտար և խորթ բաներ, շատ անբնական պահանջողութիւններ: Նրանք ուղում են մեր աշխարհումն էլ բռնանքների աշխարհումն ապրել, ցանկանում են բռնանքի հերոսներից մէկի դերը խաղալ, բայց էդ բոլորին չհասնելու պատճառով, դրանք թէ ուտելումը, թէ խմելումը և թէ հագնելումը չուսուցվել են անում, պարապ են անցկացնում իրանց ժամանակը, բոլորովին չմասնակցելով իրանց գերդաստանի դործերին: Ուրեմն էդ աղջիկները չեն գիտի ոչ իրանց ծնողների դիտեցած կեանքի համար հարկաւոր բաները և իրանց դիտեցածն էլ հենց միայն մէկ քանի Զրախարայն բառերն են, պիանայի աճելը, պարզալը և մէկ քանի էլի էդպիսի դատարկ բաներ: Ուսումը դրանց մէջը հիմը չէ դրնում, չէ մարտում դրանց միտքը սովորած դիտութիւնները, և ի հարկէ անհիմը և չմարտած բաները մէկ չնչին պատճառով քարուքանդ կլինին և կանհետանան:

Բայց աղջկանց դիմագրիւններում համարեն թէ բոլորովին հակառակն է լինում: Աղջիկը դնում է դիմագրիւն, սովորում է

մինչև ճաշը, յետոյ դալիս է տուն և մինչև առաւօտը իր ծնողների, բարեկամների հետ և բնական աշխարհի մէջն է, տեսնում է և լաւը և վատը: Եւ ի հարկէ էդքան ունենւրի հետ պատահելով և խօսելով կեանքին վերաբերեալ լաւ և վատ բաների վրայ, դրա միտքը բաց է լինում օրէցօր, լաւը և վատը ջոկելով միմեանցից: Նրա սովորած դիտութիւններն էլ աւելի օգուտ են բերում և հաստատում է դրանց մտքի մէջ, որովհետեւ սովորածը տուն յետ դառած ժամանակը, կեանքի մէջ էլաւ բաներին են յարմարացնում, իրանց ծնողների դիտեցածի ստացածների պակասութիւնները լրացնում և ուղղում և էդպիսով անդադար մշակում իրանց միտքը և սիրտը: Տանը դիմագրիւնումը սովորող աղջկան չէք տեսնի երբէք պարապ ժամանակներին բռնանք կարգաւոր, որովհետեւ կեանքումը էնքան հետաքրքրական բաներ կան, էնպիսի զանազան վայելչութիւններ, որ դրանք բոլորովին չեն էլ գիտի, թէ երբ է դրանց պարապ ժամանակը: Դրանց բռնանք իսկական աշխարհն է և բռնանքի հետեւերը իրանց ծնողներն են, բարեկամները և ծանօթները: Աղջիկն էնքան բաներ է իմացել, տեսել, սովորել, փորձել, որ իր ամուսնու հետ ապրելիս ամեն մէկ հանգամանքի համար պատրաստ ունի իր փորձը և գիտութիւնը, նա պիտանի է դառնում իր մարդուն նրա դործերումը, հասկանում է նրա ուղածը և էդպիսով ի հարկէ սէրը և խաղաղութիւնը, կարծիք չկայ, որ կլծաղաւորէ դրանց տանը:

Ուսումնարանումը մարմնակազմութեան, դիդիկեայի և դատարարակութեան կանոնները սովորելով դրանք մի և նոյն ժամանակը փորձով կրկնում են իրանց տանը իրանց եղբայրների և քայրերի վրայ: Դրանք իրանց կամ հարկանքի տանը տեսնում են նոր ծնած երեխաներ, նրանց պահելու և կրթելու ձևը և դիմագրիւնումը սովորածը իսկոյն միտներն է գալիս և համեմատում են սովորածը իրանց տանն էլածի հետ և հասկանում են իրանց սովորածի վերադանցութիւնը:

Տան ու տեղի կառավարելու և տանտիրութեան մասին էլ աւելորդ է մինչև անդամ ասել, որովհետեւ դիմագրիւնիցը դուրս, աղջիկն իրանց տանը ամեն օր տեսնում է տանտիրիկներ և տան ու տեղի կառավարողներ և ինքն էլ հետևում է նրանցը:

Պէտք է ասել նմանապէս, որ դիմագրիւնումն աղջիկը քիչ է սովորում, քան թէ ինստիտուտումը, բայց բանն էն է, որ դիմագրիւնումը սովորած քիչը հիմնաւոր և պլուզատու է կեանքի համար:

խնայողութեանը հարկաւոր են էն աղջկանց համար, որոնք կամ որք են մնացած և տէր չունին, կամ որոնց ծնողները բարձր վարձով խանգարված և բարոյականութենով փչացած են և նմանապէս էն երեխաների համար, որոնց ծնողները հեռու են կենում քաղաքից և կամ անգաղար տեղափոխվելու են մէկ քաղաքից միւս քաղաք: Միայն էս դիտուածներումը զորդ որ առանց խնայողութեանի դժուար է:

Գիմնադիւանների լաւ կողմերը պատմելուց յետոյ հարկաւոր է էստեղ ասել մեր ծնողների և բարեկամների վրայ երկու խօսք: Աղջիկը իրանց տանն է կրթվում, բացվում, ինչպէս ասացինք և ի հարկէ ամեն բան, ինչ որ տեսնում է դա իրանց տանը խորը տը պաւորվում է դրա մտքի մէջը: Ծնողներն են պարտական իրանց վատ օրինակներով չըփչացնել իրանց աղջկանց բնութարանովը, այլ միշտ աշխատել, որ իրանց խրատը, խօսքը և գործը նման լինին միմեանց և եղպիւտով սուտը հեռացնեն իրանցից և թաղաւորայինն ճշմարտութիւնը:

Էս անգամով մեր խօսքը վերջացնելուց առաջ հարկաւոր ենք համարում յիշել, որ Թիֆլիսումը հերոս բաց էլաւ մէկ աղջկանց դիմնադիւան: Էդ ուսումնարանի հաշիւներից երևում է, որ էդտեղ սովորող աղջկանցից չատ փոքր մասը հայերիցն է: Չպէտք է մոռանալ, որ էդ ուսումնարանն ունի 10 պատուաւոր հոգաբարձուներ, որոնցից իւրաքանչիւրը տարին 300 մ. է տալիս ուսումնարանին և հիմի դրանք բոլորն էլ համարեա թէ հայեր են: Շատը չէ էլ իմանում, ո՞ր դիտէ, թէ էդդիւսի մէկ դիմնադիւան կայ աղջկանց համար: Մինչև երբ պէտք է մնան էդպէս և իրանց աղջկանցը կամ անբնական ուսում տալով փչացնել և կամ բոլորովին ոչ մէկ տեղ ուսում չտայ, այլ թողնեն Աստուծու վրայ, թէ «ինչոր կուլի, կուլի»:

ՋԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմից ընտրած պատգամաւորը մեր Աթոռովիտսի ընտրելու համար: Մեկ զրում է յուլիսի 3-ին Պետերբուրգից մեր պատուիր բարեկամ Մ. Մ. Մ.-ը, որ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմից հայ ժողովուրդը պատգամաւոր է ընտրել մեր Աթոռովիտսի ընտրելու համար Նոր Նախիջևանի քաղաքապետին, որպէս ընտրած քաղաքացի կարասիտ Հայրա-

պետեանցին: Գրած ընտրելուն համաձայն են նմանապէս և Պետերբուրգի հայերը, ինչպէս երևում է նամակի մէջ հայերի ստորագրութիւններից:

Շամախու վիճակի պատգամաւորը: Յուլիսի 21-ին Շամախու վիճակի երեւոյթները պատգամաւոր ընտրելին իրանց կողմից վահախաւ կաթողիկոսի ընտրութեանին մասնակից լինելու բժշկապետ պ. Գաւիթ Ռոստոմեանցին և նրա կանդիդատ պ. Արահամ Լալայեանցին:

Ուսումնարանի Հաղթատի վանքում: Գրում են Հաղթադից էս տարւայ փետրվարի 24-ին, որ Հաղթադի վանքում էս տարի յաւարտ ամսին Յովսէփ վարդապետ Խարաղեանցի աշխատութեանով բաց է արած հայ երկխաների համար ուսումնարան: Մինչև էդ նամակի գրելը ուսումնարանումը լինում են 21 աշակերտներ:

Նրնաստանդին Նիկողայի վիճակի ճանապարհորդութիւնը: Նովին Բարձրութիւն Մեծ իշխան Կոստանդին Նիկողայի վիճակի Մեծ իշխան Նիկողայ Կոստանդինովիչը յուլիսի 24-ին դուռս եկան Պետերբուրգից դէպի Կիւի, որտեղ մնալու են 3 օր: Նրանից յետոյ կերթան Նիկողայեի քաղաքը և էդտեղից չոգնաւոր կղան փոխով Բարձր, Կովկասեան փոխադայ Մեծ իշխան Միխայէլ Նիկողայի վիճակի տնարանոցը:

Բազմարայի մասին: Գրում են դեպի չայով պետերբուրգից օգոստոսի 9-ին, որ Ռուսաց ժառանգի ամուսնացու Կոմսոնի Գազմարան սեպտեմբերին դալու է Պետերբուրգ:

Ամերիկացի Ֆոկսը Պետերբուրգում: Հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգների կառավարութիւնը ուղարկել է էս տարի Պետերբուրգ կապիտան Ֆոկսին թագաւոր կայսր Ալեքսանդր 2-ին շնորհաւորութիւն բերելու Ամերիկացուց կողմից ապրիլի 4-ի վտանգիցն ազատելու պատճառով: Ֆոկսը արդէն հասել է Պետերբուրգ յուլիսի վերջին և մեծ հանդեսներ է կատարել էդ պատճառով Պետերբուրգում:

Խօշերայի մասին: Պետերբուրգում օգոստոսի 1-ին հիւանդացաւ խօշերայով 149 մեռաւ 14: Օգոստոսի 2-ին հիւանդացաւ 146, մեռաւ 8: Օգոստոսի 3-ին հիւանդացաւ 184, մեռաւ 17: Օգոստոսի 4-ին հիւանդացաւ 237, մեռաւ 11: Խօշերայի սկզբից, այս ինքն յունիսի 14-ից մինչև օգոստոսի 5-ը հիւանդացաւ էդտեղ 10,659, մեռաւ 2508:

Խօշերայի սկզբից, այս ինքն յունիսի 14-ից մինչև օգոստոսի 5-ը հիւանդացաւ էդտեղ 10,659, մեռաւ 2508:

Մոսկովումը օգոստոսի 4-ին 34 մարդ կար խօշերայով հիւանդ: Օգոստոսի 5-ին հիւանդացաւ 6, մեռաւ 6: Խօշերայի սկզբից, այս ինքն յուլիսի 16-ից մինչև օգոստոսի 5-ը հիւանդացաւ էդտեղ 134, մեռաւ 48:

Նիժնի Նովոքոբոլումը յուլիսի 22-ից մինչև 29-ը հիւանդացաւ խօշերայով 18, մեռաւ 9:

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լիւկսպուլ օգոստոսի 3:

Լաօր ծախվեցաւ մօտ 15,000 հակ բաղնախի գները բարձրահալու վրայ են:

Պետերբուրգ օգոստոսի 6:

Կուրսը Լօնդոնի վրայ 28 1/2 — 29 պէն Պարիժի վրայ 300 — 304 ամստիմ 50% Լատարեյով առաջին փոխառութիւնի տոմսակները . . . 110 մանէթ 50% Լատարեյով երկրորդ փոխառութիւնի տոմսակները . . . 107 մ.

Ռալին . . . 6 մ. 60

Թիֆլիս օգոստոսի 20:

Քաղաքում բացված թագաւորական բանակի բաժանումը յայտնում է սրանով հասարակութիւնին, որ վառաձիները իրանց օգուտի համար լաւ են տարածել իրր թէ բանկը փողի խտրդայ անելը կշարունակէ միմիայն մինչև սեպտեմբերի 14-ը. բայց էդ համբաւի տուութիւնը յայտնի է և բանկը յայտնում է, որ նա սրանից յետոյ էլ չարունակում է և պէտք է չարունակէ թէ փողի խտրդայ անելը և թէ միւս իր տեսակ տեսակ գործողութիւնները:

Էս չաբաթ ծախվեցաւ մօտ 60 հակ բաղնախի 11 մանէթով փոխթը, բայց այնուամենայնիւ առուտուրը թոյլ է: Մեր փողոցը հիմի էն անհանդիստ դրութեան մէջն է, ինչպէս որ միշտ լինում է Մակարիայի եւրմարկայի ժամանակը:

Շաքարը Ֆրանսիացուց . . . 10 մ.

— Ռալին . . . 10 մ. 50 կ.

Արծաթը 84 1/2 . . . 280 մ.

— 72 1/2 . . . 75 մ. կա.

Ռալին . . . 6 մ. 75 կ.